ԳԱՅԱՆԵ ԷՐՆԻԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, *տ.գ.թ., դոցենտ*
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտաշխատող, բաժնի վարիչ

ԻՆՏԵԳՐԱՑԻԱ. ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆ

Նոր ձևավորված Եվրասիական տնտեսական միության՝ ԵԱՏՄ, վերաբերյալ վերլուծություններում գերիշխող է այն տեսակետը, որ կառույցի իրական նպատակը հետխորհրդային տարածքում աշխարհաքաղաքական ձգողականության նոր բևեռի ստեղծումն է՝ որպես այլընտրանք գոյություն ունեցող եվրոպական և ամերիկյան բևեռների[1]: Իրողություն է նաև, որ արդի համաշխարհային հանրության գրեթե բոլոր ցնցումները մեծ տերությունների աշխարհաքաղաքական նկրտումների բախման արդյունք են: Բայց տնտեսագիտական միտքը մշտապես փորձել է աշխարհի մեծ և փոքր երկրներում խմորվող զարգացումները մեկնաբանել հիմնականում տնտեսական գործոններով՝ փոխարժեք, գին, տոկոսադրույք, տնտեսական քաղաքականություն, համեմատական առավելություններ և այլն, հիմքում, սակայն, ընդունելով նաև դրանց ոչ տնտեսական հիմնապատճառների կարևորությունը:

Աշխարհաքաղաքականությունը (գեոպոլիտիկան)՝ որպես գիտություն, չի ընդունվել խորհրդային իշխանությունների և գիտնականների կողմից, համարվել է կեղծ գիտություն, «հակագիտական դոկտրինա[2]: Այս իներցիայով պայմանավորված էլ, հետխորհրդային տնտեսագիտական միտքը մշտապես խուսափել է տնտեսական վերլուծություններում աշխարհաքաղաքական գործոնի դերի քննարկումից: Մինչդեռ, փոխվել են ժամանակները. տնտեսական զարգացումների լիարժեք ուսումնասիրությունն, ըստ էության, դարձել է անհնար առանց տվյալ երկրի աշխարհաքաղաքական կոորդինատների ճշգրտման: Ավելին, առաջացել է նոր գիտական պարադիգմայի անհրաժեշտություն, որը կհամակարգի աշխարհաքաղաքական գործոնների ազդեցության ուղղությունները, օրինաչափությունները, դրանց գնահատման գիտական եղանակները և մոտեցումները, որոնք որպես վերլուծական գործիքակազմ կօգտագործվեն ժամանակակից տնտեսագիտական հետազոտություններում:

Աշխարհաքաղաքական գործոնների ազդեցությունն առավել ակնառու է փոքր բաց տնտեսություն ունեցող երկրների պարագայում, որոնք սովորաբար քաղաքական, տնտեսական և սոցիալական կախվածության մեջ են գտնվում այլ, առավել հզոր (տնտեսապես և ռազմական առումով) երկրից, ինչն էլ վերջին հաշվով կանխորոշում է փոքր երկրի զարգացման մոդելը, երբեմն նույնիսկ՝ աճի և անկման սահմանները: Ինչ խոսք, աշխարհաքաղաքականությունը չի հանգում միայն երկրների միջև բազմակողմանի կախվածություններով եզրագծված տիրույթում երկրների պահվածքի օրինաչափությունների բացահայտմանը, կամ, որ առավել գործնական է՝ համապատասխան ռազմավարական մոտեցումների մշակմանը: Այն հաճախ ընկալվում է կամ ամենաակնհայտ կերպով՝ իբրև քաղաքական մտքի ուղղորդում աշխարհագրական գործոններով ձևավորված իրողությունների համակարգում երկրի բարգավաճման համար հանձնարարականների մշակմանը, կամ ավելի ընդարձակ, բայց զուտ քաղաքական իմաստով՝ որպես գիտություն, որն ուսումնասիրում է տարբեր պետությունների և միջպետական միավորումների միջև ազդեցության ոլորտների բաշխման և վերաբաշխման օրինաչափությունները, տարածքների նկատմամբ վերահսկողության մեխանիզմները: Միաժամանակ, հարկ է նկատել, որ նորագույն ուսումնասիրություններում գիտական միտքը «աշխարհաքաղաքականություն» տերմինը սկսել է ավելի ու ավելի շատ առնչել տնտեսական հիմնախնդիրներին, հատկապես տարածաշրջանային ինտեգրացիոն գործընթացների ազդեցությունների գնահատման ժամանակ:

Եթե անդրադառնանք Ռ. Չելլենին, ով առաջինն է շրջանառության մեջ դրել «գեոպոլիտիկա» հասկացությունը (1899թ), ապա այն հայեցակարգ է, որը պետությունը դիտում է որպես յուրա-

[1] О.В.Буторина, А. В. Захаров. О научной основе евразийского экономического союза. Эвразийская экономическая интеграция. №2 (27), май, 2015.
[2] Словарь иностранных слов, М., 1980.

հատուկ աշխարհագրական համակարգ՝ ֆենոմեն տարածության մեջ, որը ձգտում է ընդլայնել իր կեցության և գոյության սահմանները՝ տիրույթը (Kjellén, Rudolf, 1917): Տնտեսագիտության հետ փոխառնչության իր շառավիղների մեջ աշխարհաքաղաքականությունը ներառում է ոչ միայն աշխարհագրական գործոնների ազդեցությունը, այլ նաև պետության անվտանգության համար կարևոր, ռազմավարական նշանակություն ունեցող գործոնների (ռազմական արդյունաբերություն, նոր տեխնոլոգիաներ, կայացած հեռահաղորդակցական համակարգ, բնակչության առանձնահատկություններ, մասնավորապես՝ վերջինիս քաղաքական ու գաղափարական համախմբվածությունը և այլն) ազդեցությունը պետության տարբեր ենթահամակարգերի (տնտեսություն, քաղաքականություն, մշակույթ, սոցիալական համակարգ) վրա: Հենց այս դիտակետից էլ պետք է վերլուծել աշխարհաքաղաքական գործոնի ազդեցությունը տարածաշրջանային ինտեգրացիոն զարգացումների վրա:

Մինչդեռ, տնտեսագիտական միտքը հաճախ շարունակում է կառչած մնալ ավանդական տեսություններին, փորձելով վերաիմաստավորման և որոշակի փոխակերպման միջոցով դրանք համապատասխանեցնել նոր ժամանակներին, ինչը սակայն քիչ երաշխիքներ է ենթադրում երևույթների գիտական վերլուծության համար: Օրինակ, տնտեսական ինտեգրացիայի գործընթացներն ուսումնասիրելիս, երկրների հնարավոր օգուտների գրավական դիտելով առավելապես արտահանման աճի հնարավորությունները, հաճախ է կիրառվում Բ.Բալասսայի «բացահայտված համեմատական առավելությունների ինդեքսը», որը թվում է, վաղուց արդեն պետք է իրեն սպառած լիներ, այն իմաստով, որ չի արտացոլում արտահանման վրա ազդող գործոնները, հնարավորություն չի տալիս բացահայտել արտահանման ներուժը, անտեսում է տնտեսական արդյունավետության հիմնահարցերը և այլն[1]: Կարծում եմ, ինդեքսի հեղինակն այն առաջարկել է առավելապես որպես վիճակագրական, այլ ոչ թե որպես վերլուծական ցուցանիշ արտահանման կառուցվածքի արդյունավետությունը գնահատելիս: Ուստի, դրա կիրառմամբ վերլուծություններում, առնվազն առկա է մեթոդոլոգիական անճշտություն: Արդյունավետության անընդհատ փոփոխվող չափանիշների պարագայում, Բալասսայի ցուցանիշի ընտրությունը՝ որպես կողմնորոշիչ ինտեգրացիայի հնարավոր վեկտորի հիմնավորման ժամանակ, նույնպես նպատակահարմար չէ: Հայաստանի իրավիճակում հայտնված երկրի համար (պարտադրված պատերազմ, երկկողմանի շրջափակում, սոցիալ-տնտեսական անբարենպաստ կացություն, արտագաղթ և այլն) անհրաժեշտ է շեշտադրում անել երկրի ներուժային հնարավորությունների բացահայտման և իրացման վրա:

Ժամանակ առաջ, թեկնածուական ատենախոսության և ապա «ՀՀ արտաքին առևտրի հետագիծը համեմատական առավելությունների բազմաչափ համակարգում» (Երևան, 2013թ) մենագրության մեջ ես առաջարկել էի արտաքին առևտրում երկրների տնտեսական առավելությունների գնահատման մի մոտեցում[2], որը ենթադրում էր երևույթների բազմատարբերակ գնահատումների հիման վրա ձևավորված ինտեգրալ կողմնորոշիչ՝ յուրօրինակ բրգաձև մոդել, բաղկացած արտաքին առևտրի վրա ազդող յոթ հիմնական գործոններից՝ աշխատուժ, արտադրության այլ գործոններ, համաշխարհային շուկայի պահանջարկ, այլընտրանքային ծախքեր, ապրանքի կենսացիկլի առանձնահատկություններ, գների մակարդակ և փոխարժեք, ներքին շուկայի ինստիտուցիոնալ պայմաններ: Անդրադառնալով «այլընտրանքային ծախքեր» գործոնին, որպես երկրի արտաքին առևտրի ուղղությունները պայմանավորող գործոնի, դրանում առանձնացրել էի շերտեր, որոնք ներառում էին սուբյեկտիվ գնահատականներ առ այն, թե որքանով է նպատակահարմար այս կամ այն արտադրությունում մասնագիտացումը երկրի տնտեսական անվտանգության կամ ազգային շահերի առաջնահերթություններից ելնելով: Միանշանակ է, որ ինտեգրացիոն վեկտորների առավելություններն ու թերությունները գնահատելիս բացառապես տնտեսական շահով առաջնորդվելը որոշակի իրական վտանգներ կարող է ենթադրել՝ պայմանավորված երկրի աշխարհաքաղաքական կոորդինատների փոփոխության արգելակներով:

---

[1] Այս մասին առավել մանրամասն տե՛ս Գ.Հարությունյան, «Դիտողություններ ՀՀ արտահանման կառուցվածքի բարելավման սկզբունքների շուրջ», Սոցիալ տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում (Հանրապետական գիտաժողովի նյութեր, Գիրք 1), 2012թ:

[2] Տե՛ս նշված աշխատություն, էջ 68-82:

Գծապատկեր 1

Ինտեգրալ համեմատական առավելությունների բուրգ

Վերստին վերլուծելով վերոհիշյալ բուրգի նաև մյուս բաղադրիչները, կարելի է ընդհանրացնել, որ դրանք զգալի չափով կրում են աշխարհաքաղաքական գործոնի ազդեցությունը: Օրինակ, Հայաստանի (և ոչ միայն) համար աշխատուժ գործոնը գնահատելիս, չենք կարող հաշվի չառնել Խորհրդային Հայաստանի կրթական համակարգի առանձնահատկությունները, երկրից զանգվածային արտագաղթի փաստը, արտագաղթի հիմնական ուղղությունները, դրա ազդեցությունը երկրի ներսում աշխատուժի տնտեսական պահվածքի վրա, պատմական իրողություններով պայմանավորված հայերի աշխարհասփյուռ լինելու հանգամանքը, դրանից բխող բոլոր սոցիալ-մշակութային առանձնահատկությունները և այլն: Աշխարհաքաղաքական հարթությունում լիակատար վերլուծության են ենթարկվում նաև արտադրության այլ գործոնները, համաշխարհային շուկայի պահանջարկը, արժութային փոխարժեքը և գների մակարդակը: Բավական է միայն փաստել, որ 2015 թվականի հունիսի դրությամբ Հայաստանում օտարերկրյա ներդրումների համախառն հոսքերի 38%-ը և ՕՈՒՆ-երի համախառն հոսքերի ավելի քան 46%-ն իրականացվել են ՌԴ կողմից[1], ընդ որում՝ գերազանցապես տնտեսության կարևորագույն ենթակառուցվածքներում՝ գազի և էլեկտրաէներգիայի մատակարարում, կապ, հեռահաղորդակցություն, բացի այդ 2014 թվականի դրությամբ «Հանքային վառելանյութ, նավթ, նավթամթերք և այլն» ապրանքախմբի ավելի քան 75%-ը Հայաստան ներկրվել է հենց Ռուսաստանից[2]: Միաժամանակ, 2014 թվականին (ինչպես նաև՝ նախորդող տարիներին) Ռուսաստանն է եղել Հայաստանի թիվ մեկ առևտրային գործընկերը, արտահանման մեջ 20%, իսկ ներմուծման մեջ՝ 25% մասնաբաժիններով: Փաստեր են, որ Ռուսաստանի աշխարհաքաղաքական տիրույթում գտնվելու հանգամանքը պայմանավորել է Հայաստանի հետ համագործակցության բազմակողմանիությունը: Միաժամանակ, նկատելի է Ռուսաստանում և Հայաստանում գների ընդհանուր մակարդակի և առանձին ապրանքատեսակների գների տատանումների, ինչպես նաև՝ այլ արժույթների նկատմամբ հայկական դրամի և ռուսական ռուբլու փոխարժեքների սինխրոն վարքի դրսևորում, ինչը տրամաբանական է տնտեսական ու քաղաքական խորը փոխներտաճման պայմաններում: Հետևապես, օրինաչափ է այն, որ կարող են զգալի նմանություններ լինել նաև երկու երկրներում շուկայական համակարգն ապահովող ինստիտուցիոնալ և իրավական դաշտում, գոնե տարբեր մակարդակներում տնտեսահարաբերությունների կարգավորման մեխանիզմները ներդաշնակեցնելու նկատառումներով:

---

[1] Իրավիճակն աննշան տարբերությամբ նույնն է ներդրումների զուտ պաշարների պարագայում: Աղբյուրը՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն:

[2] Աղբյուրը՝ ԱԱՎԾ:

Ինչ վերաբերում է ապրանքի կենսացիկլի առանձնահատկություններին, ապա դրա դիտարկումը որպես արտաքին առևտրում երկրների համեմատական առավելություններն արտացոլող գործոնի (հետևաբար նաև՝ հաջող տնտեսական ինտեգրացիայի գրավականի), պայմանավորված է հիմնականում երկրների զարգացման մակարդակներում տեխնոլոգիական խզման փաստով: Աշխարհաքաղաքական տեսանկյունից նկատենք, որ այսօր աշխարհում ազդեցության տիրույթների համար պայքարի մեջ մտնում են հատկապես այն երկրները, որոնք տեխնոլոգիական զարգացման մակարդակով որոշակի դիրք ունեն և կարողանում են նոր տեխնոլոգիաներն առաջին հերթին ծառայեցնել նոր սպառազինության ստեղծման, ռազմական տեխնիկայի կատարելագործման նպատակներին: Բացի այդ նման երկրներն աշխարհաքաղաքական իրենց տիրույթը պահպանելու նպատակով տեխնոլոգիական ցիկլերի որոշակի փուլեր կարող են տեղափոխել այլ երկրներ՝ մեծացնելով օտարերկրյա ներդրումների հոսքերը, դրանով իսկ՝ ռեցեպիենտ երկրի կախվածությունը, միաժամանակ խոչընդոտելով վերջինիս տեխնոլոգիական զարգացմանը:

Ինչպես տեսնում ենք, ինտեգրացիոն գործընթացների բազմաշառավիղ համակարգում չկա գոնե մի ուղղություն, որն անտեսի աշխարհաքաղաքական շահը, ուստի, ինտեգրացիոն հնարավոր վեկտորի ընտրության ժամանակ խնդիր է առաջանում գնահատել նաև այդ գործոնը հնարավորինս օբյեկտիվ (ինչու չէ՝ արժեքային) չափանիշներով և բացահայտել երկրների մրցունակության վրա ազդեցության հավանական ուղղությունները: Ինչ խոսք, նման գնահատականները պահանջում են փոխկապակցված վերլուծությունների որոշակի համակարգեր, սակայն ենթադրում են եզրահանգումների հիմնավորվածության առավելագույն աստիճան և հետևաբար՝ նշանակալի արդյունավետություն գործնական խնդիրների լուծման ժամանակ: Հենց այդ դիտակետից նկատենք, որ եթե չլիներ արտաքին տնտեսահարաբերությունների կառուցման աշխարհաքաղաքական տեսանկյուն, ապա Հայաստանի արտաքին առևտուրը բոլորովին այլ աշխարհագրական և ապրանքային կառուցվածք կունենար. նպատակահարմար կլիներ էներգակիրներ ներկրել «հարևան» Ադրբեջանից, առավել սերտ համագործակցել հարևաններ Թուրքիայի, Վրաստանի և Իրանի հետ և այլն: Բայց Թուրքիայի և Ադրբեջանի կողմից Հայաստանի տնտեսական շրջափակումը, արևմտյան պետությունների կողմից Իրանի նկատմամբ պատժամիջոցների կիրառման հետևանքով այդ երկրի հետ համագործակցության սահմանափակումը, հայտնի պատճառներով վրաց-ռուսական լարված հարաբերությունները, ինչպես նաև՝ տարածաշրջանում սեփական ազդեցության տիրույթի ընդլայնման Թուրքիայի հավակնությունները, որպես աշխարհաքաղաքական գործոններ, պայմանավորել են Հայաստանի արդի կացությունը: Հետևաբար, աշխարհի պետությունների աշխարհաքաղաքական քարտեզի վերաձևումների ժամանակակից գործընթացներում առաջնահերթ է երկրի ազգային անվտանգության շահերի ապահովումը: Այս պարագայում ընտրված ինտեգրացիոն վեկտորը համապատասխանում էր այդ պահանջին և ինչ-որ իմաստով արդարացված է: Առավել ևս, որ զուտ տնտեսական տեսանկյունից նոր ստեղծված աշխարհաքաղաքական իրավիճակը (Ռուսաստանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցներ, Իրանի նկատմամբ պատժամիջոցների վերացում, Ռուսաստան-Թուրքիա հարաբերությունների սառեցում), ԵԱՏՄ շրջանակներում արտաքին առևտրի կառուցվածքի բարելավման նոր հնարավորություններ է խոստանում: Պահը Հայաստանի օգտին է:

ԻՆՏԵԳՐԱՑԻԱ. ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆ

ԳԱՅԱՆԵ ԷՐՆԻԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, *տ.գ.թ., դոցենտ*
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտաշխատող, բաժնի վարիչ

Համառոտագիր

Իրողություն է, որ արդի համաշխարհային հանրության գրեթե բոլոր ցնցումները մեծ տերությունների աշխարհաքաղաքական նկրտումների բախման արդյունք են: Ուստի, տնտեսական զարգացումների լիարժեք ուսումնասիրությունն, ըստ էության, դարձել է անհնար առանց տվյալ երկրի աշխարհաքաղաքական կոորդինատների ճշգրտման: Ավելին, առաջացել է նոր գիտական պարադիգմայի անհրաժեշտություն, որը կհամակարգի աշխարհաքաղաքական գործոնների ազդեցության ուղղությունները, օրինաչափությունները, դրանց գնահատման գիտական եղանակները և մոտեցումները, որոնք որպես վերլուծական գործիքակազմ կօգտագործվեն ժամանակակից տնտեսագիտական հետազոտություններում: Հոդվածում փորձ է արվել գնահատել ինտեգրացիոն գործընթացների աշխարհաքաղաքական տեսանկյունը:

Բանալի բառեր. *Ինտեգրացիա, աշխարհաքաղաքականություն, արտահանում, համեմատական առավելություն, փոքր բաց տնտեսություն, համաշխարհային շուկա, այլընտրանքային ծախք, ազգային անվտանգություն:*

ИНТЕГРАЦИЯ: ГЕОПОЛИТИЧЕСКИЙ АСПЕКТ

ГАЯНЕ ЭРНИКОВНА АРУТЮНЯН, *к.э.н., доцент,*
зав.отделом, научный сотрудник Института экономики им. М. Котаняна НАН РА

Аннотация

Фактом является, то что все потрясения современного мирового сообщества - результат противоречий между геополитическими целями великих держав. Поэтому полноценное исследование экономических событий, по сути, стало практически невозможным без уточнения геополитических координатов данной страны. Более того, возникла необходимость в новой научной парадигме, систематизирующей направления и закономерности влияния геополитических факторов, научные методы и подходы к их оценке, которые будут использованы в качестве аналитического инструментария в современных экономических исследованиях. В статье предпринята попытка оценить геополитический аспект интеграционных процессов.

Ключевые слова: *интеграция, геополитика, экспорт, сравнительные преимущества, малая открытая экономика, мировой рынок, альтернативные издержки, национальная безопасность.*

INTEGRATION: GEOPOLITICAL ASPECT

GAYANE ERNIK HARUTYUNYAN, *Ph.D. in Economics, Associate Professor*
Head of Department, Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

The reality is that nearly all global shifts and/or shocks are the result of a clash of geopolitical goals of great powers. Hence, a comprehensive study of economic developments, per se, is impossible without clarifying the geopolitical stance of a given nation. Moreover, the need for a new scientific paradigm is inevitablethat would coordinate the geopolitical factor impact vectors, trend patterns, and scientific methods and approaches to measurements that, as an analytical toolkit could be used in contemporary economic research and studies. The article attempts to assess the geopolitical aspect of the integration processes.

Keywords: *Integration, geopolitics, exports, comparative advantage, small open economy, world market, and opportunity cost, national security.*